ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

16.05.2012թ.
168-ի 5

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Սեյրան Օհանյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Օհանյան,

21.03.2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ կայք է ստեղծվել կամ վերամշակվել 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության համար:
2. 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքի (կայքերի) մշակման (վերամշակման) եւ գործարկման համար ըստ տարիների:
3. Խնդրում ենք տրամադրել ֆինանսավորման աղբյուրները:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մինչ օրս պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան